Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Ս. Առաքելյանի անվան Տաթևի միջնակարգ դպրոցի» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի, հայոց լեզվի և գրականության, աշխարհագրության և մաթեմատիկայի ուսուցիչների թափուր տեղերի համար

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1.Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է /Ձև 1/:

2.Փաստաթուղթ /դիպլոմ/՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան որակավորման վերաբերյալ:

3.Անձնագրի պատճենը:
4.Ինքնակենսագրություն /Ձև4/:
5.Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի,հավաստագրերի պատճենները /դրանցառկայությանդեպքում/:

6.Մեկ լուսանկար 3 X 4 չափի:

7.Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք:

8.ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2023 թ.-ի հունվարի 25-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև 16:00-ը , բացի շաբաթ և կիրակի օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2023 թ. հունվարի 26-ին, ժամը 13:00-ին ՀՀ Սյունիքի մարզի Ս. Առաքելյանի անվան Տաթևի միջնակարգ դպրոցում: Հասցեն՝ ՀՀ Սյունիքի մարզ, գյուղ Տաթև, 1-ին փողոց, շենք 10: Տեղեկությունների համար զանգահարել՝ 094-51-53-37 կամ 0284-9-74-71 հեռախոսահամարներով: